

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
33

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
33

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

33

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությանը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

**ԹՈՐՈՍ ՏԱՐՈՆԱԳՈՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ
ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԻԱՄԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ**

Բանալի բառեր՝ Թորոս Տարոնացի, Կանայի հարսանիք, Տիրամայր, փրկաբանություն, Գլաձորի համալսարան, ներբող, շարական, Եսայի Նչեցի, մարիամաբանություն, մեկնություն, Գրիգոր Նարեկացի, երգերգոց:

ԺԴ դարում գործած Գլաձորի մանրանկարչական դպրոցի գլխավոր մանրանկարիչ Թորոս Տարոնացու մանրանկարչական արվեստին անդրադարձներն այնքան էլ շատ չեն: Մասնավորապես նշանակալի են Թոմաս Ֆ. Մեթյուսի ուսումնասիրությունները Գլաձորի դպրոցի մանրանկարչության պատկերագրության մասին, որտեղ անդրադարձ կա Տարոնացու մանրանկարչությանը¹: Մյուս կարևոր ուսումնասիրությունը Սիրարփի Տեր-Ներսեսյանի հոդվածն է՝ նվիրված Տարոնացու մանրանկարներին և դրանց պատկերագրությանը²: Տարոնացու մանրանկարների քննությունը կայացել է երկու տարբեր մոտեցումներով՝ մի դեպքում մանրանկարները քննվել են՝ դիտարկվելով Արևմուտքից ներթափանցած ազդեցությունների համատեքստում (Սիրարփի Տեր-Ներսեսյան)³, մյուս դեպքում՝ տեղային՝ մասնավորապես հայ եկեղեցու ընդունած մեկնողական մոտեցումներն են դարձել այն ելակետային սկզբունքը, որով քննվել է ինչպես Տարոնացու, այնպես էլ՝ Գլաձորի դպրոցի պատկերագրությունը (Թոմաս Ֆ. Մեթյուս)⁴:

Այս հոդվածում Տարոնացու մանրանկարների քննությունը կատարվել է մարիամաբանական մեկնությունների համատեքստում, որի համար մասնավոր-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող, siranushbeglaryan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ դեկտեմբերի 21, 2021, գրախոսելու օրը՝ հունիսի 2, 2022:

1 **Thomas F. Mathews and Avedis K. Sanjian**, *Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel*, Washington, D.C., 1991.

2 **Sirarpie Der Nersessian**, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts,” in *Byzantines and Armenian Studies*, Tome I, Louvain, 1973, pp. 611-630:

3 **Sirarpie Der Nersessian**, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts”, pp. 611-617.

4 **Mathews and Sanjian**, *Armenian Gospel Iconography*.

րապես քննություն են ենթարկվել ՄՄ 6289 ձեռագրի անվանաթերթերի Տիրամայրը մանկան հետ և Կանայի հարսանիքը պատկերները: Նպատակ ենք ունեցել Տարոնացու վերոնշյալ մանրանկարների քննությունը կենտրոնացնել ոչ թե պատկերագրական փոխառությունների, այլ այն ուղերձի վրա, որը մանրանկարիչը արտահայտել է դրանցում: Տարոնացու մանրանկարները դիտարկել ենք որպես պատկերային տեքստ:

Թորոս Տարոնացին գործել է մի ժամանակաշրջանում, երբ Հայ եկեղեցին կանգնած էր Արևմուտքից ներթափանցող դավանաբանական հոսանքներին պատասխանելու՝ սեփական դավանաբանական դրույթները վերասահմանելու և վերահաստատելու խնդրի առաջ: Ունիթորական շարժումը, որը մեծ տարածում էր գտել Հայաստանում, լուրջ մարտահրավերներ էր նետում Հայ եկեղեցու որդեգրած դավանաբանական ուղղվածության կայունությունը:

ԺԳ դարում Հայաստան են ներթափանցում ֆրանցիսկյան և դոմինիկյան միաբանությունների ներկայացուցիչները. դոմինիկյաններն, ըստ պահպանված տեղեկությունների՝ Հայաստանում ունեին շուրջ 50 վանք, 700 կրոնավոր, որոնք բոլորը գրեթե հայազգի էին⁵: Կիլիկիայում հաստատված կաթողիկոսարանը, Արևմուտքից քաղաքական աջակցություն ստանալու նպատակով, ևս հակվում է Կաթողիկ և Հայ առաքելական եկեղեցիների միավորմանը. 1307 թ. Սսում, ապա 1317 թ. Ադանայում գումարված ժողովներում առաջադրվում են դավանաբանական և արարողակարգային փոփոխություններ, ինչին ընդդիմանում է Արևելյան Հայաստանի հոգևորականությունը⁶: Գլաձորի համալսարանը փորձում էր դիմակայել այն գաղափարական հոսանքներին, որոնք տարածվում էին ոչ միայն բանավոր քարոզչության, այլ նաև՝ արևմտյան աստվածաբանների գործերի թարգմանությունների միջոցով⁷: Հայտնի է արևելյան հոգևորականության պատասխան նամակն, ուղղված Գրիգոր Անավարզեցուն հաջորդած Կոնս-

⁵ Ա. Պալենան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս, և միութեան նոցա ընդ Հոռմէական եկեղեցոյ ի Փլորենտեան սինոդոսի, Վիեննա, 1878, էջ 71-72, Պ. Լ. Չեխյան, «14-րդ դարի կրօնական վեճերը: Նախաբայեր Հայոց եկեղեցու հետագա բաժանումների և եկեղեցաբանական կարգավիճակի», էջմիածին, 2000, թ. Ա, էջ 106-125, 106-111: Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջմիածին, 2001, էջ 2101, 2102; 2122-2130, 2088-2090: Լ. Խաչերյան, Տոսայի նշեցին եւ Գլաձորի համալսարանը (1280-1340 թթ.), Լոս Անճելըս, Alco Printing Co., 1988, էջ 334, 335: Հայաստանում ունիթորական շարժման աշխարհագրությունը տե՛ս Sirarpie Der Nersessian, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts”, pp. 618-630:

⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2122-2130, 2088-2090: Միխայել Չամչյանց, Հայոց Պատմություն, հ. 3, Երևան, 1984, էջ 312-314:

⁷ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2100-2102, 2157: Լ. Խաչերյան, Տոսայի նշեցին եւ Գլաձորի համալսարանը, էջ 336: Յովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 279-286:

տանդին կաթողիկոսին՝ ընդդեմ Անավարզեցու առաջ քաշած Հայ եկեղեցու դավանաբանական և արարողակարգերի փոփոխությունների, որտեղ Սյունիքի եպիսկոպոսներ Հովհաննես Օրբելու և Ստեփանոս Տարսայիճի անունների կողքին կարգում ենք Գլաձորի համալսարանի ղեկավար Եսայի Նչեցու անունը⁸:

Արևմուտքից ներխուժած քաղակաքական և կրոնադավանաբանական այս հոսանքներով է Ս. Տեր-Ներսեսյանը պայմանավորել Տարոնացու նկարազարդումներում որոշ պատկերների առկայությունն ու դրանց պատկերագրությունը: Մասնավորապես այս համատեքստում են քննվել Ավետարանների անվանաթերթերին արված Տիրամայրը մանկան հետ մանրանկարները, որտեղ կիրառված պատկերագրությունն ու տվյալ պատկերների առկայությունն առհասարակ նա համարում է Արևմուտքից փոխառություն⁹:

Թ. Մեթյուսը, հիմք ընդունելով Գլաձորի համալսարանի վարած հակաունիթորական քաղաքականությունը, իր ուսումնաիրություն մեջ Գլաձորի՝ մասնավորապես Տարոնացու, մանրանկարների թեմատիկ և պատկերագրական ընտրությունը հասկանալու և մեկնաբանելու համար, շեշտադրել է Հայ եկեղեցու որդեգրած մոտեցումների կարևորությունը¹⁰: Որոշ դեպքերում սակայն ծայրահեղորեն տեղայնացնելով կիրառված պատկերագրությունը՝ հանգել է պատկերի սխալ ընթերցմանը, որպիսին է, օրինակ, Տարոնացու՝ Կանայի հարսանիքի պատկերագրության իր մեկնաբանությունը (այս մասին կխոսվի ստորև)¹¹: Պետք է նշել նաև, որ Մեթյուսի ուսումնասիրությունից դուրս են թողնվել այն պատկերները, որոնց պատկերագրությունը կարող էր ունենալ ոչ տեղային ծագում:

⁸ Գ.Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ*, էջ 280: Հայ եկեղեցուն պարտավորվում էր Հաղորդության արարողության ժամանակ ջուր խառնել զինուն, իսկ Ծննդյան տոնը նշել դեկտեմբերի 25-ին: Լ. Խաչերյան, *Եսայի Նչեցին եւ Գլաձորի համալսարանը*, էջ 344 և Գ. Հովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ*, էջ 281:

⁹ Ս. Տեր-Ներսեսյանը ֆննարկում է Տարոնացու նկարազարդած 1318 թ.-ի Եսայի Նչեցու Աստվածաշնչի ՄՄ 206, 1307թ.-ի Հարթորդում պահվող Ավետարանի, Բրիտանական թանգարանում պահվող 1321 թ.-ի Ավետարանի, ինչպես նաև ֆննարկվող ՄՄ6289 Ավետարանի մանրանկարները: Տե՛ս Sirarpie Der Nersessian, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts”, pp. 611-617: Տիրամայրերի պատկերագրության ֆննարկումը՝ pp. 615-617:

¹⁰ Այս առումով հատկանշական է Տարոնացու *Ավետման* տեսարանի իր մեկնաբանությունը: Աղբյուրի մոտ *Ավետման* տեսարանում երկու ծորակներից մի սափորի մեջ թափվող ջուրը Թ. Մեթյուսը մեկնաբանում է իբրև Քրիստոսի երկու էությունների միախառնում՝ ըստ Հայ եկեղեցու ընդունած Քրիստոսի էության սահմանման տե՛ս Mathews, Thomas F. “The Annunciation at the Well: A Metaphor of Armenian Monophysitism,” *Medieval Armenian Culture*, ed. by T. Samuelian and M. Stone, 6, 1984, pp. 343-56:

¹¹ Thomas F. Mathews and Avedis K. Sanjian, *Armenian Gospel Iconography*, էջ 147-149: Thomas F. Mathews and Alice Taylor, *The Armenian Gospels of Gladzor: The Life of Christ Illuminated*, Los Angeles, 2001, p. 47:

Հնդունելով կատարված ուսումնասիրությունների կարևորությունը՝ նշենք, որ Տարոնացու պարագայում առանցքային է պատկերների ընթերցումը մանրանկարչի պատկերային համակարգում, որտեղ փոխառություն դիտարկված պատկերագրությունն այլ ընթերցում կարող է ստանալ, նույն կերպ նաև հայկական կամ արևելյան մեկնողական ավանդույթամբ մեկնաբանված պատկերագրությունը ունենալ առավել լայն ընթերցում:

Թորոս Տարոնացու նկարագրված ՄՄ6289 ձեռագիրը

Ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այն կազմվել է 1323 թ. Եսայի Նչեցու պատվերով, որտեղ վերջինս թողել է ընդարձակ հիշատակագրություն¹²:

Այս Ավետարանը Տարոնացու նկարագրված ամենածավալուն աշխատանքներից է նչեցու Աստվածաշնչից հետո (ՄՄ 206, 1318 թ.): Այն ունի բավականին հարուստ նկարագրում՝ 8 խորան, 11 տերունական պատկեր, 4 ավետարանիչների պատկերներ, և բազմաթիվ պատկերներ լուսանցքներում՝ հրաշքի տեսարաններ, հուշկապարիկներ և այլն:

Տերունական շարքը ներկայացված է Ավետարանների տեքստերի ներսում ամբողջական էջի վրա. Մատթեոսի Ավետարանում՝ Հաղորդություն (թ. 77բ), Դժոխքի ավերում (թ. 86բ), Հարություն (թ. 88ա) տեսարանները, Մարկոսի Ավետարանում՝ Պայծառակերպություն (թ. 112բ), Մուտքը Երուսաղեմ (թ. 121ա), Դուկասի Ավետարանում՝ Ավետում (թ. 143ա), Տեառն ընդ առաջ (թ. 148ա), Համբարձում (թ. 224ա), և վերջապես Հովհաննեսի Ավետարանում՝ Ղազարոսի հարություն (թ. 235ա), Հոգեգալուստ (թ. 264ա), Խաչելություն (թ. 276ա) տեսարանները:

Տարոնացու նկարագրված գրեթե բոլոր ձեռագրերն առանձնանում են Տիրամոր պատկերների առկայությամբ, որոնք կան ինչպես վերոնշյալ նչեցու Աստվածաշնչում, այնպես էլ քննարկվող Ավետարանում¹³:

¹² Հիշատակագրությունը տե՛ս Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, ԺԴ դար, մասն Ա, Երևան, Նաիրի հրատարակչություն, 2018, էջ 457-458:

¹³ Տիրամայրը մանկան հետ պատկերներ առկա են Երուսաղեմում պահվող Տարոնացու նկարագրված 1331 թ. Ավետարանում (Եղվ. 95, թ. 4), Բրիտանական գրադարանում պահվող 1321 թ.-ի Ավետարանում (London, British Library add. MS 15411, fol. 92), 1331 թ.-ի Հարթֆորդում պահվող Ավետարանում (Hartford, Case Memorial MS 3, fol. 153) և 1317 թ.-ի ՄՄ6897 ձեռագրում: Թվարկված ձեռագրերի Տիրամայրը մանկան հետ պատկերների նկարները տե՛ս Thomas F. Mathews and Avedis K. Sanjian, *Armenian Gospel Iconography*, fig. R11, R10, R8, R7:

ՄՄ6289 ձեռագրում այս առումով հատկանշական են Ավետարանների անվանաթերթերը, մասնավորապես՝ Մատթեոսի (նկ. 1)*, Ղուկասի (նկ. 2) և Հովհաննեսի (նկ. 3): Ս. Տեր-Ներսեսյանն, ինչպես նշվեց, անդրադառնալով Տարոնացու ձեռագրերի անվանաթերթերի Տիրամայրը մանկան հետ պատկերներին և կիրառված պատկերագրությունը, փոխառություն է համարել ոչ միայն այդ պատկերների առկայությունը, այլ նաև՝ դրանց պատկերագրությունը: Մասնավորապես իբրև արևմտյան փոխառություն է դիտարկվել Քազակիր Տիրամոր պատկերը, որպիսին են այս ձեռագրում Ղուկասի (նկ. 2) և Հովհաննեսի (նկ. 3) անվանաթերթերի Տիրամայրերը¹⁴:

Ս. Տեր-Ներսեսյանը, Տարոնացու ձեռագրերում Տիրամայրը մանկան հետ պատկերների առկայությունը պայմանավորելով պատմական իրավիճակով, չափազանց մեծ նշանակություն է տվել փոխառություններին՝ պատկերները դիտարկելով բացառապես ծագումնաբանական տեսանկյունից՝ դրանք ներկայացնելով պատկերագրության պատմության համատեքստում: Մինչդեռ քննարկումից դուրս են թողնվել ատվածաբանական մեկնությունները, որոնց կարող էր հղել այս պատկերների առկայությունն ու կիրառված պատկերագրությունը: Հետևաբար, թե ինչ չափով կարելի է այս պատկերները համարել փոխառություն, և արդյոք դրանք կարող են համարվել նաև բովանդակային փոխառություններ, այն խնդիրներն են, որոնք հարցադրման կարիք ունեն և ըստ էության չեն քննվել:

Մարիամի կերպարի խնդիրը դավանաբանական համատեքստում

Նիկիայի առաջին տիեզերական ժողովում (325 թ.) Քրիստոսի էության որոշարկումը առաջ է բերում Մարիամի կերպարի խնդիրը: Հետևաբար, քրիստոնեական կրոնի և ընդհանուր քրիստոնեական վարդապետության և դավանանքի կայացման համար Մարիամի կերպարի սահմանման, տեղակայման հարցը դառնում է առանցքային: Քննության է առնվում Մարիամի կերպարը, և Եփեսոսի երրորդ ժողովում (431 թ.) ընդունվում է սահմանում, ՝ համաձայն որի՝ Մարիամը բնորոշվում է որպես Տիրամայր/Աստվածածին (*Theotokos*). նրան հատկացվում է մի տեղ, որը ո՛չ սրբերին էր և ո՛չ էլ Աստծուն՝ վերադաս էր սրբերից, բայց և հավասար չէր Աստծուն: Ինչպես նշում է Յարոսլավ Պելիկանը, այն տեղը, որ արիոսական ուսմունքի հետևորդները հատկացնում էին Քրիստո-

* Այս և մյուս նկարները տե՛ս ներդիրում:

¹⁴ Sirarpie Der Nersessian, “Western Iconographic Themes in Armenian Manuscripts”, pp. 615-617.

սին՝ գերագույն արարած, ստեղծագործության պսակ, Ուղղափառ եկեղեցին նփեսոսի ժողովի որոշմամբ հատկացրեց Մարիամին¹⁵:

Ժողովից անմիջապես հետո դեռևս Կիզիկոսի եպիսկոպոս Պրոկլոս Կոստանդնուպոլսեցին իր քարոզում կանանց հռչակում է անեծքից ազատ, իսկ Մարիամին՝ «տաճար Աստծո»¹⁶:

Մարիամի կերպարը առանցքային է դառնում փրկաբանությանն առնչվող մեկնություններում:

Խիստ առնչակցվելով Քրիստոսաբանությանը և ըստ էության սահմանվելով այս հիմքի վրա՝ մարիամաբանական աստվածաբանությունը Տիրամոր կերպարը սահմանում է այն գործառույթներով ու խորհրդաբանություններով, որոնք մինչ այդ բնորոշում էին միայն Քրիստոսին: Քրիստոսին տրվող փրկաբանական ծրագրի իրագործման համար Աստծու և մարդու նոր երկխոսության միջնորդի բնորոշումը էական է դառնում նաև Մարիամի կերպարի մեկնաբանման համար: Այս առումով մեծ նշանակություն է տրվում Ավետման տեսարանին, որտեղ Մարիամի կերպարն առանցքային նշանակություն է ստանում՝ Մարիամին տրվում է սահմանային ֆիզուրի խորհրդաբանություն. նույնը Հովհաննու Ավետարանում Քրիստոսի գործառույթն էր և խորհրդանշում էր Քրիստոսին՝ «ես եմ դուռը, ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ» (Յովհ. Ժ 9)¹⁷: Հետևաբար, դուռն իբրև Քրիստոսի մետաֆոր, էական է դառնում նաև Մարիամի կերպարի համար՝ շեմ, որով աշխարհ է մուտք գործում Աստծու փրկարար խոսքը՝ մարդեղանալով: Մարիամը մեկնաբանվում է իբրև միջնորդ Աստծու և մարդու միջև, փրկության շեմ երկնայինի երկրայինի, մահվան և կյանքի միջև: Ե-Ձ դարերով թվագրվող Մարիամին նվիրված Ակաթիստոս (*Akathist*) ներբողում Մարիամը փառաբանվում է իբրև՝ «մահկանացուների մուտք առ Աստված», «գրախտի դարպասների բանալի, ում միջոցով բացվում են գրախտի դռները»¹⁸:

¹⁵ Jaroslav Pelikan, *Imago Dei: The Byzantine Apologia for Icons*, Washington, D. C., 1990, p. 129:

¹⁶ Պրոկլոս Կոստանդնուպոլսեցին 434 թ. նշանակվում է Կոստանդնուպոլիսի պատրիարք: Քարոզի մեջբերումը տե՛ս Loli Kalavrezou, “Images of the Mother: When the Virgin Mary Became ‘Meter Theou’,” *Dumbarton Oaks Papers*, 44, 1990, pp. 165-172, p.166:

¹⁷ Ինչպես նաև Յովհ. ԺՎ 6՝ «ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ Հայրն եթէ ոչ ինեւ»:

Նոր Կտակարանից հղումների համար տե՛ս Աստուածաշունչ: մատեան Հին եւ նոր Կտակարանաց ըստ նշգրիտ թարգմանութեան նախնեաց, Վիեննա, Ամերիկեան ընկերութիւն գրոց սրբոց, 1929:

¹⁸ Ակաթիստոսի (626 թ.) անգլերեն տարբերակը տե՛ս http://drc.usask.ca/projects/ faulkner/main/related_texts/akathist.html *Դուռն/շեմի* խորհրդաբանության տեսանկյունից հատկանշական է, որ 626 թ. Սուրբ Կոլյսիի ֆաղափ հռչակված Կոստանդնուպոլիսի պաշտպանության

Հայ միջնադարյան ներբողներում Մարիամը փառաբանվում է իբրև փակ դուռ՝ «Դուռն Աղխեալ», որտեղ փակ դուռը խորհրդանշում է Մարիամի կուսու-թյունը,¹⁹ ինչպես նաև երկնքի դուռ՝ «Դուռն երկնից»,²⁰ և Արևելքի դուռ՝ «Դուռն արևելեան»²¹:

Որպես այդպիսին, Տիրամոր կերպարն իր ողջ խորհրդաբանությամբ հիմ-նականում սահմանվում է Նոր Կտակարանում Քրիստոսի կերպարի պողոսյան մեկնաբանությունների հիմքի վրա: Այս առումով մասնավորապես կարևորվում են եկեղեցու վերաբերյալ Պողոսի այլաբանական մեկնաբանությունները՝ եկե-ղեցին իբրև Քրիստոսի մարմին և միևնույն ժամանակ իբրև Քրիստոսին հավա-տացողների այլաբանություն (Եփես. Ե 22-32, Ա Կորնթ. Գ 17, Եբր. ԺԲ 22): Մա-րիամը, հաստատվելով իբրև Տիրամայր և հետևաբար իբրև Քրիստոսի երկրային բնության մարմնի ծնող, աստվածաբանական մեկնություններում ստանում է եկեղեցու խորհրդաբանությունը հետևյալ տրամաբանությամբ՝ մայր Քրիստոսի՝ Քրիստոսի մարդկային բնության ծնող, որն է՝ մայր Քրիստոսի մարմնի և ուրեմն՝ նաև Քրիստոսի մարմինը այլաբանորեն խորհրդանշող եկեղեցու, ինքնին եկեղե-ցի, որտեղ կազմավորվում է Քրիստոսի մարմինը, և մայր այն հավատացյալնե-րի, որոնք կազմում են այդ եկեղեցին²²: Մարիամի կերպարի մեկնաբանման հա-մար առանցքային է դառնում նաև Պողոսի թղթերում Քրիստոս-փեսա և եկեղե-

համար ֆաղափ դարպասների վերևում տեղադրվում է Տիրամայրը մանկան հետ սրբապատ-կերը: Տե՛ս **Averil Cameron**, “The Theotokos in Sixth-century Constantinople: A City finds its Symbol,” *The Journal of Theological Studies*, Vol. XXIX, issue 1 (April 1978, pp. 79-108), p 97:

¹⁹ Մարիամի փառաբանությունն իբրև Դուռն Աղխեալ տե՛ս **Պետրոս Սիւնեցի**, *Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ Կոյսն Մարիամ ըստ յորչորջման նորին. եւ ի Սուրբ Գրոց լուծմունք նոցին, հոգեւոր Իմաստիւք*, Մատենագիրք Հայոց, հ. Գ, Զ դար, առաջաբանը և ծանոթագրու-թյունները **Յակոբ Քէոսէեան**, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 391-392, 394: **Գրիգոր Սկեւացի**, *Վերափոխման ներբող, հետևյալ գրքում՝ Թամար Տասնապետեան*, Տիրամայր: Գրիգոր Նարե-կացիէն նոր բնագիր մը: Անտիպ բնագիրներ: Հայ եկեղեցիի իշխանութեան եւ աստուա-ծաբաններու կողմէ գրուած եւ թարգմանուած, Լիզպոն, 1998, էջ 27:

²⁰ Մարիամի փառաբանությունն իբրև Դուռն երկնից տե՛ս **Սահակոյիս Սիւնեցի**, Կցուդ ծննդեան, Մատենագիրք Հայոց, հ. Զ, Ը դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 602: **Գրիգոր Նարեկացի**, *Քարոզ եկեղեցուց եւ Տապանակին Տեառն*, Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, Ժ դար, խմբ. *Արմէնուհի Քեռէկէրեան*, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 692:

²¹ Այստեղ մեկնողական բնագրերը հղում են Հին Կտակարանի Եզեկ. ԽԳ 1-2 գլխին, որտեղ Եզեկիլիի մարգարեական տեսիլները մեկնվում են իբրև Քրիստոսի գալուստի կանխատու-թյուն: Մարիամի փառաբանությունն իբրև Դուռն արևելեան տե՛ս **Գրիգոր Սկեւացի**, *Վերա-փոխման ներբող*, էջ 27: **Թեոդորոս Քոթեմաստ**, *Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի Միշտ Կոյսն Մարիամ*, Մատենագիրք Հայոց, հ. Ե, է դար, առաջաբանը և ծանոթագրությունները **Յակոբ Քէոսէեան**, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1258:

²² Մարիամի կերպարի խորհրդաբանությունը տե՛ս **Robert Murray**, *Symbols of Church and Kingdom: A Study in Early Syriac Tradition*, Oxford, 1975, pp. 131, 144:

ցի այլաբանական հարաբերությունը (Բ Կորնթ. ԺԱ 2, եփես. Ե 22-32)²³, որտեղ Մարիամն իբրև եկեղեցի ստանում է հարսի խորհրդաբանությունը:

Ավետարաններում և Պողոսի թղթերում Քրիստոսի կերպարը դիտվում է իբրև Հին Կտակարանում կանխասվածի իրագործում, նույն կերպ և Քրիստոսին ծնող Մարիամի կերպարն է մեկնաբանվում Հին Կտակարանի համատեքստում: Մարիամ՝ մայր-հարս-եկեղեցի այլաբանական մոդելը իր մեկնողական զուգահեռներն է ստանում Հին Կտակարանի մեկնություններում:

Այս առումով նշանակալի է Երզ երգոցում Սողոմոնի սիրային ներբողի մեկնաբանությունը, որտեղ Սողոմոնը դիտարկվում է իբրև Քրիստոսի նախատիպ, իսկ սիրեցյալի հետ երկխոսություն-հարաբերությունը՝ որպես այլաբանություն Քրիստոս-փեսա և Մարիամ-հարս հարաբերության: Երզ երգոցի նման մեկնաբանություն հանդիպում ենք Մարիամին ձոնված ճառերում և տաղերում՝ որպիսին են Հովհաննես Դամասկոսցու Ծննդյան և Ննջման ճառերը, որտեղ Մարիամը գովերգվում է իբրև Երզ երգոցի հարս²⁴: Հայ մատենագրության մեջ նման մեկնաբանություն կարող ենք համարել Գրիգոր Նարեկացու «Տաղ Քաղցրիկ»-ը²⁵:

Տիրամայրը Թորոս Տարոնացու պատկերագրական համակարգում

Տարոնացու ՄՄ 6289 ձեռագրում Տիրամայրը մանկան հետ պատկերը ներկայացված է Մատթեոսի (նկ. 1), Դուկասի (նկ. 2), Հովհաննեսի (նկ. 3) անվանաթերթերին, սակայն բացակայում է Մարկոսի անվանաթերթին (նկ. 4):

Նոր Կտակարանում Մարիամի մասին տեղեկությունները բավական սահմանափակ են, թերևս բացառություն է Դուկասի Ավետարանը, որտեղ Մարիամի կերպարն առանցքային շեշտադրում ունի, և որտեղ նրան անդրադարձներն

²³ Ավետարաններում Քրիստոս-փեսա այլաբանական խորհրդաբանությամբ Քրիստոսն է խոսում՝ Մատթ. Թ 15, Մարկ. Բ 19, Դուկ. Ե 34, Յովհ. Գ 29:

²⁴ S. Jean Damascène, *Homélie sur La Nativité et La Dormition*, introduction, traduction et notes par Pierre Voulet, Paris, 1961, pp. 71, 73, 149, 129, 111. Բուն Երզ երգոց գրքի մեկնաբանությունն իբրև Մարիամ-հարսի և Քրիստոս-փեսայի հարաբերության այլաբանական մեկնաբանություն չի հանդիպում մինչև ԺԴ դարը. այն հիմնականում մեկնաբանվում է որպես Քրիստոս-փեսայի և եկեղեցի-հարսի հարաբերության այլաբանություն, որպիսին են Գրիգոր Նյուսացու Երզ երգոցի մեկնությունը, իսկ հայ մատենագրության մեջ՝ Գրիգոր Նարեկացու մեկնությունը: Սակայն Մարիամին ձոնված ճառերում այս այլաբանությունը արդեն հանդիպում է սկսած է դարից, որպիսին են Հովհաննես Դամասկոսցու նշված ճառերը: Գրիգոր Նյուսացու Երզ երգոցի մեկնության ռուսերեն քարգմանությունը տե՛ս https://azbyka.ru/otechnik/Grigoriy_Nisskij/izvyasnenie-pesni-pesnej-solomona/1: Գրիգոր Նարեկացու Երզ երգոցի մեկնությունը տե՛ս **Գրիգոր Նարեկացի, Մեկնություն Երզոց երգոցի Սողոմոնի**, Մատենագիրք Հայոց, Բ. ԺԲ, Ժ դար, իմբ. *Կլիթ Յովսէփեան*, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 760-883:

²⁵ **Գրիգոր Նարեկացի, Փոխ**, Մատենագիրք Հայոց, Բ. ԺԲ, Ժ դար, էջ 649-650:

ամենաշատն են (Ղուկ. Ա 26-56, Բ 1-52, Ը 19-21, ԺԱ 27-28): Մարիամը Ղուկասի Ավետարանի փրկաբանական ուղերձում առանցքային ֆիգուր է (Ղուկ. Ա 26-38, Ա 42-44, Ա 46-56, Բ 19, ԺԱ 27), մինչդեռ Մատթեոսի Ավետարանում նա ներկայացվում է իբրև միայն Աստուծու փրկաբանական ծրագրի իրագործման միջոց (Մատթ. Ա 1-25, Բ 1-23, ԺԲ 46-50, ԺԳ 54-58): Այս առումով ուշագրավ է Ղուկասի և Մատթեոսի Ավետման տեսարանը ներկայացնող տեքստերի համեմատությունը (Ղուկ. Ա 26-38, Մատթ. Ա 18-25) և անդրադարձները Մարիամի կերպարին: Ղուկասի տեքստում Մարիամը ներկայացվում է իբրև իրադարձությունների առանցք, որը գրիտակից մասնակցություն է ունենում կատարվածին և հրեշտակի ուղերձն ընդունում՝ դրսևորելով ազատ կամք (Ղուկ. Ա 38)²⁶: Մատթեոսի Ավետման տեսարանում երկխոսությունը տեղի է ունենում հրեշտակի և Հովսեփի միջև՝ գործուն և առանցքային ֆիգուր է Հովսեփը (Մատթ. Ա 19-25):

Մարկոսի Ավետարանն առանձնանում է Ղուկասի և Մատթեոսի Ավետարաններից՝ այստեղ Մարիամը աստվածային փրկաբանական ծրագրում չունի որևէ դերակատարում, բացի այդ այս Ավետարանը համատեսներից միակն է, որտեղ բացակայում են Ավետման ու Ծնունդի տեսարանները (Մարիամը Մարկոսի Ավետարանում Մարկ. Գ 31-35, Զ 1-3):

Ինչպես նշվեց, Տարոնացին քննարկվող ձեռագրում Տիրամայրը մանկան հետ պատկերը չի ներկայացնում համատեսներից միայն Մարկոսի անվանաթերթին (նկ. 4), ինչը կարող է պայմանավորված լինել դրանում Ավետման, Քրիստոսի Ծնունդի տեսարանների բացակայությամբ:

Պատկերը, սակայն, առկա է Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթին (նկ. 3), որի տեքստում դարձյալ բացակայում են Ավետման ու Ծնունդի տեսարանները (Մարիամը Հովհաննեսի Ավետարանում Յովհ. Ա 13, Բ 1-12, Զ 42, ԺԹ 25-28):

Եթե առաջնորդվենք Ավետարաններում Մարիամի կերպարի անդրադարձներով, և Տիրամոր պատկերների առկայությունը անվանաթերթերին պայմանավորենք այս հանգամանքով, ապա Մարկոսի Ավետարանը թերևս միակն է, որտեղ Մարիամի կերպարին որևէ կարևորություն չի տրվում²⁷ և, ի տարբերություն մյուս Ավետարանների, ամենաքիչն է հիշատակվում (Մարկ. Գ 31-35, Զ 1-3):

Մեկնողական տեսանկյունից, սակայն, տրամաբանական պետք էր համա-

²⁶ Այս առումով հատկանշական է, որ ձեռագրերի նկարագրողումներում որպես կանոն Ավետման տեսարանը ներկայացվում է Ղուկասի Ավետարանում, ինչպես օրինակ ՄՄ 7651 ք. 132բ, ՄՄ 197 ք. 169բ, ՄՄ 5786 ք. 171բ-172ա, ՄՄ 6795, ք. 93բ-94ա և ֆննարկվող ձեռագրում՝ ՄՄ 6289 ք. 143ա:

²⁷ Մարիամի կերպարի անդրադարձների և կարևորության տեսանկյունից Ղուկասի Ավետարանից հետո բերևս կարող ենք նշել Հովհաննեսի Ավետարանը. այստեղ Մարիամի կերպարն ընդգծվում է իբրև Քրիստոսի մայր (Հովհ. Բ 1-5, 12 Հովհ. ԺԹ 26), նա գործուն դերակատարում ունի Կանայի հարսանիքը գլխում (Հովհ. Բ 1-5, 12):

րել Տիրամայրը մանկան հետ պատկերի առկայությունը միայն համատես Ավետարանների անվանաթերթերին, քանզի ըստ մեկնությունների՝ Մատթեոսի, Ղուկասի, Մարկոսի Ավետարանները Քրիստոսի ծննդյան մարդկային բնությունն են շեշտադրում, մինչդեռ Հովհաննեսի ավետարանը, ինչպես Սարգիս Կունդն է նշում «հայրականը»՝ Աստվածայինը²⁸:

Ձեռագրում այս պատկերի բացակայությունը Մարկոսի Ավետարանի անվանաթերթին, որտեղ նա հեծյալներ է պատկերել, թերևս ունի այլ բացատրություն և չի կապվում այս Ավետարանում Մարիամի կերպարի անդրադարձներին²⁹:

Ի՞նչ ուղերձ ունեն Տարոնացու Տիրամայրերը:

Տարոնացու նկարագրողումներում Տիրամայրերի պատկերների առկայությունն ունի այլ ուղերձ, որը կապվում է Մարիամի կերպարի աստվածաբանական ընկալմանը և ոչ Ավետարաններում նրա հիշատակմանը:

Այս առումով առանձնակի նշանակություն ունեն Թագակիր Տիրամայրերը: Ձեռագրում թագակիր են ներկայացված Ղուկասի (նկ. 2) և Հովհաննեսի անվանաթերթերի Տիրամայրերը (նկ. 3): Մանրանկարիչը Թագակիր Տիրամայր է պատկերել նաև Մատթեոսի Ավետարանի Քրիստոսի ծննդաբանությունը ներկայացնող տեքստին կից՝ լուսանցքում (նկ. 5):

Տարոնացու նկարագրողումներում այս պատկերագրությամբ Տիրամայրերի նշանակությունը հասկանալու համար անդրադարձ պետք է արվի եսայի նշեցու Աստվածաշնչին (ՄՄ 206), որտեղ նա Թագակիր Տիրամայրը մանկան հետ պատկեր է ներկայացնում Հին Կտակարանի երգ երգոցի լուսանցքում (նկ. 6): Ուղղակիորեն կապված չլինելով հինկտակարանյան տվյալ պատումի բովանդակությանը՝ մանրանկարն այստեղ ծառայում է որպես պատկերային մեկնաբանություն:

Ինչպես նշվեց, Մարիամի գովերգումն իբրև երգ երգոցի հարս հանդիպում է դեռևս Հովհաննես Դամասկոսցու Տիրամորը ձոնված Մենդյան և Ննջման ճա-

²⁸ Սարգիս Կունդի մոտ կարդում ենք՝ «... քանզի Մատթեոս և Մարկոս և Ղուկաս ի խոնարհագոյն ծնընդեն են Տէրն մեռոյ սկիզբն արարին իւրեանց անտարանին ... որ ըստ մարդեղութեան ի մեզ տպաւորեցաւ խորհուրդն: Բսկ Յովհաննէս ի հայրական ծնընդենն սկիզբն արարեալ աստուածաբանապէս հառէ և այն աներբ և անժամանակ է, քանզի ասէ ի սկզբանէ էր բանն և ինքն բանն Աստուած էր»: Տէ՛ս ՄՄ 5448, ք. 7բ:

²⁹ Իր նկարագրողած մեկ այլ ձեռագրում Տարոնացին Տիրամայրը մանկան հետ պատկեր է ներկայացրել Մարկոսի Ավետարանի անվանաթերթին: Այսպիսին է 1321 թվականի իր նկարագրողած ձեռագրում (Լոնդոն, Բրիտանական թանգարան, թիվ 15411 ձեռագիր, fol. 92): Նշված մանրանկարը տե՛ս Thomas F. Mathews and Avedis K. Sanjian, *Armenian Gospel Iconography: The Tradition of the Glajor Gospel*, fig. R10:

ներում³⁰: Հայ մատենագրության մեջ այս այլաբանությունը առկա է Գրիգոր Նարեկացու «Տաղ Քաղցրիկ»-ում³¹: Երկու դեպքում հեղինակները որպես Մարիամի գովաբանություն կա՛մ ուղղակիորեն մեջքերում են երգ երգոցից տողեր³², որոնք փեսան ասում է հարսին, կա՛մ Մարիամին փառաբանում են երգ երգոցի գովաբանական ոճով³³:

Հստ էության Տարոնացին պատկերի նման տեղադրությամբ հղում է այս այլաբանությանը, որտեղ Մարիամի կերպարը մեկնաբանվում է որպես երկնային թագավորի հարս: Այստեղ Թագակիր Տիրամուր պատկերագրությունն ընթեռնելի է Սողոմոն-թագավոր Քրիստոս-երկնային թագավոր այլաբանական մեկնության համատեքստում, որտեղ Մարիամի կերպարը մեկնաբանվում է որպես երկնային թագուհի:

Այլաբանական հարս և փեսայի՝ երկնային թագավորի և թագուհու հարաբերության մեկնողական ընկալումը էական է նաև Ավետման խորհրդաբանության մեջ:

Մեկնություններում փրկաբանական ուղերձի գաղափարը դրսևորվում է հոսքի մարդեղացումն որպես հարս և փեսայի միություն մեկնաբանմամբ, որտեղ Ավետումը³⁴ այլաբանորեն ներկայացվում է որպես խորհրդավոր ամուսնություն: Այս առումով նշանակալի է Գրիգոր Նարեկացու Մարիամին ձոնված ներբողը որտեղ առանցքային է խորհրդավոր ամուսնություն/միություն այլաբանությունը.

«...երկիր տիրակիր՝ լծակցելով ընդ աստուածակիր երկինն վերին, ուս-

³⁰ Իր «Ննջման» ճառում Դամասկոսցին օգտագործում է երգ երգոցի տողերը իբրև Քրիստոս-փեսայի փառաբանություն ուղղված Մարիամ-հարսին: Որպես Մարիամի փառաբանություն երգ երգոցից օգտագործվում են երգ Դ 7; Ա 3; Դ 10: Տե՛ս S. Jean Damascène, *Homélie sur La Nativité et La Dormition*, p. 149:

³¹ Գրիգոր Նարեկացի, *Փոխ*, ԺԲ Հատոր, էջ 649-650:

³² Դամասկոսցին Մարիամի «Ննջման» ճառում երգ երգոցից մեջքերում է Բ 10-12; Դ 7,10; Ա 3; Ե 3, Բ 1,2; Ա 3,4 հատվածները: Մարիամի «Մննդյան» ճառում՝ երգ Ա 2; Ա 4; Դ 4; Դ 7 հատվածները: Տե՛ս S. Jean Damascène, *Homélie sur La Nativité et La Dormition*, pp. 71, 73, 149, 129, 111: Նարեկացու «Տաղ Քաղցրիկում» մեջքերվում են երգ Ա 4; Բ 4,5; Դ 6; Բ 1: Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Փոխ*, հ. ԺԲ, էջ 649-650:

³³ Դամասկոսցին, «Ննջման» ճառում, որպես Մարիամի փառաբանություն օգտագործելով երգ երգոցի Ա 3 հատվածը, հարսի առաջին դեմքով ասված խոսքը «Տարա զիս արհայ ի սենեակ իր» (երգ Ա 3) փոխում է երկրորդ դեմքի և իբրև Մարիամ-հարսի փառաբանություն գրում է «Տարա Բեգ արհայ ի սենեակ իր» (“Le roi t’a introduite dans son appartement.”): Տե՛ս S. Jean Damascène, էջ 111: Քննարկվող Գրիգոր Նարեկացու տաղում ոչ միայն երգ երգոցից անմիջականորեն մեջքերված են տողեր, այլ այն ամբողջությամբ գրված է այս ոճով, որտեղ Մարիամի կերպարն ընթեռնելի է օգտագործված այլաբանություններում՝ «Ահա նա՛, հարսն իմ ցանկալի...», «Ե՛կ, մերձատուր իմ հարսնունի...»: Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Փոխ*, էջ 649:

³⁴ Ի նկատի է առնվում Ավետման մեկնողական ընկալումը՝ Հրեշտակի ավետիսը, Մարիամի համաձայնությունը և հղիանալը:

աի խրախուսեալ հոգեւորական հրեւումամբ երկուցն ... Արդ, պարեպտոս հոգեպէս տարփմամբ... զհոգեւոր հարսանեացն զիղծս քեզ, ամենասուրբ եւ արարչընկալ Տիրուհի եւ Աստուածածին»³⁵:

Հայ մատենագրության մեջ նշանակալի են նաև այլ ներբողներ ու շարահաններ, որտեղ դարձյալ որդի-փեսա մայր-հարս մեկնողական այս հարաբերությունը արտահայտվում է Մարիամին ուղղված փառաբանություններում.

Աստուածածին սուրբ Կոյս...

Որ ի քեզ փեսայացեալ՝
Բանըն կենաց բնակեցաւ...³⁶

Ուրախ լե՛ր, դըլխոյ, հարսըն պանծալի անմահ փեսային³⁷:

Տարոնացու նկարագրողումներում Տիրամոր պատկերները ընթեռնելի են խորհրդավոր ամուսնություն մեկնողական այս համատեքստում:

Այս առումով հատկանշական է քննարկվող ձեռագրում Մատթեոսի Ավետարանի Թագակիր Տիրամայրը մանկան հետ պատկերը (Նկ. 5), որը մանրանկարիչը զետեղում է Քրիստոսի ծննդաբանությունը ներկայացնող տեքստին կից՝ լուսանցքում: Տարոնացին այն ներկայացրել է ծննդաբանության վերջում, որտեղ ավետարանիչը հիշատակում է Մարիամին և Մարիամից ծնված Քրիստոսին՝ «Մատթան ծընաւ զՅակովբ, Յակովբ ծընաւ զՅովսեփ զայրն Մարեմայ, որում խաւսեցեալ զՄարիամ կոյս յորմէ ծընաւն Յիսուս» (Մատթ. Ա 16): Այստեղ Տարոնացին Տիրամոր գլխավերևում Սուրբ Հոգին խորհրդանշող աղավնի է պատկերում: Նման պատկերագրությամբ մանրանկարիչը հղում է Ավետման խորհրդաբանությանը, որտեղ աղավնու պատկերը խորհրդանշում է Մարիամի Սուրբ Հոգու միջոցով հղիացումը: Մատթեոսի Ավետարանի ծննդաբանության հատվածում ներկայացնելով Խոսքի մարդեղացումը խորհրդանշող պատկեր՝ մանրանկարիչն ըստ էության ընդգծում է խորհրդավոր միություն/Ավետման և դրանում Մարիամի կերպարի աստվածաբանական ընկալման կարևորությունը³⁸:

Մեկնողական տեսանկյունից Երգ երգոցի (Նկ. 6) և Մատթեոսի Ավետարանի (Նկ. 5) լուսանցքների Թագակիր Տիրամայրերը կապվում են իրար՝ երկու դեպքում նկարիչը հղում է Խոսքի մարդեղացման այլաբանական մեկնությանը՝ խորհրդավոր միության փրկաբանական ուղերձին, որտեղ Մարիամը մեկնա-

³⁵ **Գրիգոր Նարեկացի**, *Ներբող ի սուրբ Կոյսն*, Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, էջ 954:

³⁶ *Կանոն երրորդ առկրն Աստուածայայտնութեան*, Մատենագիրք Հայոց, հ. Ը, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 45:

³⁷ **Ներսէս Շնորհալի**, *Տաղ Աւետեաց*, Մատենագիրք Հայոց, հ. ԻԱ, գիրք Ա, ԺԲ դար, խմբ. Արմենուհի Քեռիկէրեան, Երևան, 2018, էջ 663:

³⁸ Հարկ է նշել, որ այս մամուրանկարն իր պատկերագրությամբ և տեղադրությամբ բննելի է նաև Քրիստոսաբանական տեսանկյունից՝ որպես Քրիստոսի մարդկային և Աստվածային բնությունները խորհրդանշող պատկեր:

բանվում է որպես երկնային թագուհի՝ երկնային թագավորի հարս (Դշխոյ, Տիրուհի, Արքա(յ)ուհի երկնից)³⁹:

Մարիամի խորհրդաբանության տեսանկյունից կարևոր է նաև Տիրամայրը մանկան հետ պատկերների առկայությունն անվանաթերթերին:

Ինչպես նշվեց, Մարիամի կերպարի սահմանումն իբրև «Տիրամայր» առաջ բերեց Ավետման տեսարանում Մարիամի կերպարի խորհրդաբանական մեկնաբանումը՝ իբրև Աստու խոսքի մուտքի շեմ/դուռ:

Ձեռագրերի նկարազարդման տեսանկյունից այս առումով առանձնակի նշանակություն են ստանում անվանաթերթերը, որոնք մուտք են ավետարանիչների տեքստին՝ Աստու խոսքին: Հետևաբար Տիրամայրը մանկան հետ պատկերի առկայությունը անվանաթերթերին կարող է ընթերցվել իբրև անմիջական հղում Մարիամ-դուռ այլաբանական մեկնությունը⁴⁰:

Թորոս Տարոնացին, Տիրամայրը մանկան հետ պատկերը տեղադրելով Ավետարանների սկզբում (Անվանաթերթերին և Մատթեոսի ավետարանի Ծննդաբանության հատվածում), հղում է Մարիամի կերպարի խորհրդաբանությանը, որտեղ Մարիամի պատկերը կարող է ընթերցվել թե՛ որպես շեմ/դուռ՝ սահմանային ֆիզուր հին և նոր ուխտերի միջև, թե՛ որպես նոր մարդկության մայր և թե՛ որպես խորհրդավոր ամուսնություն հարս՝ երկնային թագավորի թագուհի⁴¹:

³⁹ Իբրև երկնային թագուհի Մարիամի փառաբանական ձևերն են՝ Դշխոյ, Տիրուհի, Արքա(յ)ուհի երկնից: Դշխոյ փառաբանական ձևի համար տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, *Երկրորդ ներբողեան Մարիամին*, հետևյալ գիրքում՝ **Թամար Տասնապետեան**, *Տիրամայր*, էջ 15, **Ներսէս Շնորհալի**, *Տաղ Աւետեաց*, հ. ԻԱ, էջ 663: *Տիրուհի* փառաբանական ձևի համար տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, *Քարոզ Ասացեալ Ի Փոխումն Ամենաւրհնեալ Սուրբ Աստուածածին*, հ. ԺԲ, էջ 706: **Գրիգոր Նարեկացի**, *Ներբող Ի Սուրբ Կույան (Ա տարբերակ)*, հ. ԺԲ, էջ 954: **Գրիգոր Նարեկացի**, *Քարոզ Ասացեալ Ի Սուրբ Ծնունդն եւ Ի Մկրտութիւնն*, հ. ԺԲ, էջ 632: Արքա(յ)ուհի երկնից փառաբանական ձևի համար տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, *Երկրորդ ներբողեան Մարիամին*, հետևյալ գիրքում՝ **Թամար Տասնապետեան**, *Տիրամայր*, էջ 15:

⁴⁰ Այս տեսանկյունից ուշագրավ է Բարոյայի Ավետարանում Ավետման տեսարանի տեղակայումը, որը ներկայացված է համաձայնության տախտակների էջին, այսինքն՝ Ավետարանի սկզբում: Դրանով հեղինակը մեկնողական կապ է ստեղծել Ավետման, նրանում Մարիամի խորհրդաբանության և ձեռագրի համաձայնության տախտակների միջև, որտեղ ձեռագիր Ավետարանի այս էջը ստացել է մուտքի/դուռ գործառույթ՝ բոլոր չորս Ավետարանների համար: Բարոյայի Ավետարանի նշված պատկերը տե՛ս **Francesca Dell'Acqua**, “Porta coeli: the Annunciation as Threshold of Salvation,” *Convivium*, II, eds. I. Foletti, H. L. Kessler, 1, 2015, pp. 102-25, p.102:

⁴¹ Ըստ էության այս ուղերձն ունեն նաև հայկական եկեղեցիների մուտքի բարավորի *Տիրամայրը մանկան հետ* պատկերաբանողակները, որոնք ևս իրենց տեղադրությամբ հղում են Մարիամ-դուռ/շեմ և Մարիամ՝ մայր-հարս-եկեղեցի մեկնողական մոդելին: Տե՛ս օրինակ Նորավանքի ԺԿ դարի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավթի մուտքի բարավորի *Տիրամայրը մանկան հետ* պատկերաբանողակը, ինչպես նաև ԺԿ դարի Սպիտակավոր վանքի Ս.

Կանայի Հարսանիքը Թորոս Տարոնացու պատկերային համակարգում

Հայ արվեստին վերաբերող ուսումնասիրություններում քիչ են անդրադարձները Կանայի հարսանիքը տեսարանի պատկերմանը:

Թ. Մեթյուսը, քննելով Տարոնացու Կանայի հարսանիքը ներկայացնող մանրանկարների պատկերագրությունը, առանձնակի ուշադրություն է առնում թագակիր հարս ու փեսայի պատկերագրությունը՝ նման պատկերային մեկնաբանությունը դիտարկելով հայ եկեղեցու հարսանեկան արարողությունների տեսանկյունից⁴², իսկ որպես նորկտակարանյան տվյալ տեսարանի այլաբանություն նշում է միայն Հաղորդության խորհուրդը⁴³: Հարս ու փեսայի թագերով պատկերագրությունը ներկայացնելով իբրև հայկական հարսանեկան արարողությունների ազդեցություն՝ Թ. Մեթյուսը պատկերի մեկնաբանությունը հակում է մի ուղղության, որը ոչ միայն չի բացատրում կիրառված պատկերագրությունը, այլ շեղում է իրական ուղերձից:

Մեկնողական տեսանկյունից Հովհաննու Ավետարանի այս պատմությունը (Յովհ. Բ 1-12) ունի բավականին լայն և բարդ ուղերձ, որտեղ դարձյալ էական նշանակություն է տրվում Մարիամի կերպարի խորհրդաբանությունը: Նշելով միայն հաղորդության խորհուրդը՝ ըստ էության արվեստաբանական մեկնաբանությունները այս տեսարանում անտեսում են հարս և փեսա միություն խորհրդաբանությունը, մինչդեռ այս երկուսը փոխկապակցված են և լրացնում են միմյանց:

Ամուսնության խորհրդաբանությունն առանցքային նշանակություն ունի Կանայի հարսանիքի մեկնաբանություններում. հաշվի է առնվում, որ ջուրը գինու վերածելու հրաշքը տեղի է ունենում հարսանիքի ժամանակ:

Եփրեմ Ասորին Կանայի հարսանիքը մեկնում է որպես խոսքի մարդեղացման այլաբանություն: Նա սահմաններում ջրի գինի դառնալը նույնացնում է Մա-

Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի Տիրամայրը մանկան հետ պատկերաֆանդակը:

⁴² Նա նշում է թագերի կիրառությունը հայկական հարսանիքներում: Տե՛ս **Thomas F. Mathews and Avedis K. Sanjian, Armenian Gospel Iconography**, p. 147, ինչպես նաև տե՛ս **Thomas F. Mathews and Alice Taylor, The Armenian Gospels of Gladzor**, p. 47:

⁴³ Կանայի հարսանիքի հրաշքն իբրև Հաղորդության նախատիպ՝ նկատի է առնվում Վերջին ընթրիքի ժամանակ տրվող հաղորդությունը: Թ. Մեթյուսն այստեղ հիմնականում ֆննարկում է Հարթֆորդում պահվող՝ Տարոնացու նկարագրված 1331թ. Ավետարանի, Բրիտանական քանգարանում պահվող 1321 թ.-ի Ավետարանի և U.C.L.A.-ի Ավետարանի Կանայի հարսանիքը մանրանկարները: Տե՛ս **Thomas F. Mathews and Avedis K. Sanjian, Armenian Gospel Iconography**, pp. 147-149: Հարթֆորդի Ավետարանի այս պատկեր նման է ֆննարկվող ձեռագրի Կանայի հարսանիքը պատկերին՝ ներկայացված են թագակիր հարս ու փեսան մեկ գահին բազմած, ներկում՝ 6 սափոր: Տե՛ս նկ. 469d **Thomas F. Mathews and Avedis K. Sanjian** գրքում:

րիամի հղիանալու հետ՝ գիտարկելով հրաշքի տեսարանն իբրև Մարիամի հղիության այլաբանությունն.

«Արդ ՚ի ջուրց անտի արար գինի, զի հաւանեցուցէ վասն յղութեան և ծննդեան իւրոյ՝ թէ որպէս եղև: Վեց թակոյկի կոչեաց ՚ի վկայութի միոյ կուսին՝ որ ծնաւ զնա: Յղացան թակոյկի նորոգ, ոչ ՚ի սովորութենէ իւրեանց. և ծնան գինի, և այլ ոչ ևս յաւելին ծնանել: Սոյնպէս յղացաւ կոյսն և ծնաւ զԷմանուէլ, և այլ ոչ ևս յաւել... Հրաւիրեաց փեսայն երկրաւոր զփեսայն երկնաւոր, և տէր հանդերձեալ հարսանեացն ՚ի հարսանիսն եկն...»⁴⁴

Առաջին հրաշքը (Հովհ Բ 11) մեկնաբանելով իբրև *տոսքի մարդեղացման այլաբանությունն՝ ակնարկվում է Ավետման/խորհրդավոր ամուսնության փրկաբանական նշանակությունը, որտեղ ինչպես էական է որդի-փեսա մայր-հարս հարաբերությունը, այնպես էլ՝ Քրիստոս-փեսա և Մարիամով կազմավորված եկեղեցի-հարս միությունը: Կանայի հարսանիքի պատմությունն՝ իբրև Քրիստոս-փեսա և եկեղեցի-հարս միության այլաբանություն, կարգում ենք Նանա Ասորու մոտ*⁴⁵:

Այս առումով ուշագրավ է Կանայի հարսանիքը ներկայացանող այն մանրանկարների պատկերագրությունը, որտեղ Քրիստոսը, Մարիամը և հարսն ու փեսան պատկերված են նստած սեղանի շուրջ, իսկ նրանց կողքը կամ ներքևի հատվածում՝ սափորներում ջուրը գինու վերածելու տեսարանը⁴⁶:

Ըստ այս պատկերագրության, իրադարձության գործող հիմնական անձինք՝ Մարիամը, Քրիստոսը և հարսն ու փեսան են՝ զբաղեցնում են մանրանկարի կենտրոնական և հիմնական մասը: Մինչդեռ ըստ ավետարանական պա-

⁴⁴ Սրբոյն Եփրեմի, *Մեկնութիւն Համաբարբառ որ ըստ Չորից Աւետարանչաց եւ Թարգմանութիւն Առակաւոր բանից եւ Աւետարանական ճառք*, Մատենագրութիւնք, Հատոր երկրորդ, Ի Վենետիկ ի տպարանի Սրբոյն Դազարու, 1836 թ. էջ 50:

⁴⁵ «Այլ եթէ ընդէ՛ր ի հարսանիսն նախ զնշանն գործէր՝ ուրանաւ փեսայն և հարսն: Վասն զի մի մարմին էին լինելոց. և ուր յաւէտ ուրախութիւնքն. զի և առակ արինակի լինիցի որ ի մեզ էին գործելոց. վասն զի ինքն էր փեսայ եկեղեցոյ. որպէս ցուցանէ ավետարանիչն. եթէ որ ունի հարսն՝ նա է փեսայ: Եւ քանզի հաւատացելոց հոգիդ իբրև հարսունս և գեղեցիկս են ի ձեռս նորա, ընդ որոց միացեալ ի ձեռն մկրտութեան շնորհի՛ զգեստ նոցա գոյով, և ի ձեռն մատակարարութեանն կենսաբեր մարմնոյ և արեանն իւրոյ՝ յինքն միացուցանելով՝ անդամս իւր արժանատրեաց լինել. ուստի և ցանգ ուրախացեալ միշտ ի հարսնարանի նորա՝ յանանց առագաստին ուրախ լինին»: Տե՛ս **Նանայի Ասորիոյ վարդապետի, Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին**, հ. է, հետևյալ գիրքում՝ Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Վենետիկ, 1920, էջ 44-45:

⁴⁶ Նման պատկերագրություն ունեն Թորոս Ռոպինի (Վաշինգթոն, Ֆրիթի գրադարան թիվ 32.18 ձեռագիր, fol. 548) և U.C.L.A. գրադարանում պահվող Թորոս Տարոնացու թիվ 1 Ավետարանի Կանայի հարսանիքը ներկայացնող մանրանկարները: Տե՛ս **Mathews and Sanjian, Armenian Gospel Iconography**, fig. 469b, p. 453:

տումի՝ հարսն ու փեսան չունեն որևէ դերակատարում⁴⁷, հիմնական գործող անձինք Մարիամն ու Քրիստոսն են:

Մանրանկարներում Մարիամի, Քրիստոսի և հարս ու փեսայի պատկերները խորհրդանշական հարաբերության մեջ են, որն արտահայտվում է նրանց տեղադրությամբ⁴⁸: Իրար կողքի և կենտրոնական դիրքով տեղադրությունը ակնարկում է դրանց մեկնողական առնչությունը՝ հարս ու փեսայի պատկերները ընթեռնելի են որպես Քրիստոսի և Մարիամի այլաբանություն, որոնք իրենց թագադիր պատկերագրությամբ հղում են նաև Քրիստոս-երկնային թագավոր և Մարիամ-երկնային թագուհի այլաբանությանը:

Հաշվի առնելով Կանայի հարսանիքի պատմությունը ներկայացնող վերոնշյալ մանրանկարների պատկերագրությունը՝ առանձնակի ուշադրության է արժանի այս տեսարանը ներկայացնող մանրանկարը քննարկվող ձեռագրում: Տարոնացին Կանայի հարսանիքը պատկերում է Ավետարանի տվյալ գլխի լուսանցքում՝ ներկայացնելով միայն հարսին ու փեսային, որոնց թագերի վերևում խաչ կա (նկ. 7): Քրիստոսի և Մարիամի փոխարեն որպես պատմության «հակիրճ» նկարզարդում պատկերելով ավետարանական պատմության մեջ որևէ դերակատարում չունեցող հարս ու փեսային՝ մանրանկարիչը հղում է պատմության այլաբանական մեկնությանը⁴⁹: Խաչով պսակված թագերով հարս ու փեսայի պատկերն այստեղ կարող է ընթերցվել և՛ իբրև եկեղեցու այլաբանության պատկերային մեկնաբանություն՝ իբրև ակնարկ Քրիստոս-փեսա և եկեղեցի-

⁴⁷ Փեսան ողջ պատմության մեջ մի պահ է հիշատակվում, որտեղ դարձյալ չունի ընդգծված դերակատարում (Հովհ. Բ 10):

⁴⁸ Հայկական մանրանկարչության մեջ սեղանի շուրջ հարսն ու փեսան ներկայացվում են կա՛մ կողք կողքի՝ Մարիամի և Քրիստոսի մեջտեղում՝ Մարիամը հարսի կողքին, Քրիստոսը՝ փեսայի (ինչպես Վեհափառի ավետարանում է: Տե՛ս ՄՄ 10870, ք. 214 ա), կա՛մ՝ կենտրոնում Մարիամն ու Քրիստոսը, իսկ նրանց կողքին՝ հարսն ու փեսան՝ հարսը Մարիամի կողքին, փեսան՝ Քրիստոսի (այսպես է Թորոս Թուլիմի պատկերագրության մեջ՝ Ֆրիքի գրադարան թիվ 32.18 ձեռագիր, fol. 548), կա՛մ՝ կենտրոնում Մարիամն ու հարսը, նրանց կողքին՝ Քրիստոսը և փեսան՝ Քրիստոսը Մարիամի, փեսան հարսի կողքին (Տարոնացու նկարագրում մեջ՝ U.C.L.A. Gospel, թիվ 1, fol. 469):

⁴⁹ Ըստ Ավետարանական այս պատմության մեկ այլ պատկերագրության՝ ներկայացվում են Մարիամն ու Քրիստոսը և սափորները: Այստեղ կարևորվում է Կանայի հարսանիքում Մարիամի դրամամբ ջուրը գինու վերածելու դրվագը: Նման պատկերագրությունը հղում է Մարիամի կերպարի աստվածաբանական նկարագրին: Կյուրեղ Ալեքսանդրացին (ե դար) ջուրը գինու վերածելու դրվագը դիտարկում է իբրև Տիրամոր բարեխոսություն, միջնորդություն: Կյուրեղ Ալեքսանդրացու նշված մեկնաբանությունը տե՛ս **Loli Kalavrezou**, “Images of the Mother: When the Virgin Mary became ‘Meter Theou’”, p. 167: Հայկական մանրանկարչության մեջ Կանայի հարսանիքը նման պատկերագրությամբ ներկայացվում է 1198 թվականի Սկււրայի Ավետարանում (Լեհաստանի ազգային գրադարան, Վարշավա, թիվ Rps 8101 III ձեռագիր, fol. 332v):

Տե՛ս https://polona.pl/item/ewangeliaz-ze-skewry_NTU3NzE2OQ/5/#info:metadata :

հարս միություն, և՛ իբրև հղում Քրիստոս-փեսա-երկնային թագավոր և Մարիամ-հարս-երկնային թագուհի այլաբանություն:

Տարոնացու պատկերագրություն մեջ այս պատկերի, ինչպես նաև Տիրամայրը մանկան հետ պատկերների առկայությունը մեկնողական է և կապվում է *Խոսքի մարդեղացման/խորհրդավոր ամուսնություն* փրկաբանական խորհրդին, որտեղ էական նշանակություն ունի Մարիամի կերպարի խորհրդաբանությունը:

Տարոնացու նկարագրողումների պարագայում էական է պատկերների դիտարկումն իբրև մեկ մեկնողական ամբողջություն⁵⁰:

Թորոս Տարոնացու նկարագրողած ձեռագրերում մարիամաբանական շեշտադրումները թերևս կարող են բացատրվել ԺԲ-ԺԳ դդ. կազմավորված դոմինիկյան և ֆրանցիսկյան միաբանությունների ազդեցությամբ, որոնք իրենց ուղղվածությամբ մարիամակենտրոն էին⁵¹ և, ինչպես պատմական աղբյուրներն են հաղորդում, արդեն ԺԳ դարում բավականին հիմնավորվել էին Հայաստանի որոշ շրջաններում: Սակայն էական նշանակություն պետք է տրվի պատկերների կիրառությանը և դրանց մեկնողական ուղերձին:

Մարիամի պաշտամունքն իր ողջ խորհրդաբանությամբ արդեն իսկ բավականին կայացած էր մինչ այս միաբանությունների հիմնումն ու դրանց ներթափանցումը Հայաստան, ինչը փաստում են Մարիամին ուղղված ներբողները⁵²:

Հետևաբար, եթե պատկերգարական տեսանկյունից թագակիր Տիրամոր պատկերը կարող է դիտարկվել իբրև կաթոլիկ ձեռագրերից փոխառություն⁵³, ինչպես նշում էր Ս. Տեր-Ներսեսյանը, բովանդակային առումով այս պատկերը համարժեք է հայ միջնադարյան ներբողներում Մարիամի Դշխալ, Տիրուհի, Արֆա(յ)ունի երկնից փառաբանական ձևերին: Նույն կերպ և Տիրամայրը մանկան հետ պատկերների առկայությունն առհասարակ ու դրանց Ավետարանների

⁵⁰ Հարկ է նշել, որ ինչպես Տիրամայրերը, այնպես էլ Ավետարանի այս տեսարանը առկա են մանրանկարչի նկարագրողած գրեթե բոլոր ձեռագրերում:

⁵¹ Դոմինիկյան և ֆրանցիսկյան միաբանության ներկայացուցիչները համարվում էին Սուրբ Կոլյսի ասպետներ (vrais chevaliers de la Vierge) և Մարիամի պաշտամունքի տարածման մեջ մեծ դերակատարում են ունեցել: Տե՛ս **Émile Mâle**, *L'art religieux du XIIIe siècle en France* (Malakoff: Librairie Armand Colin, 1958) II, pp. 175-185:

⁵² Ամենահինը Պետրոս Սյունեցու ներբողն է, որը թվագրվում է Զ դարով, որտեղ առկա է Մարիամի ողջ խորհրդաբանական կերպարը: Տե՛ս **Պետրոս Սյունեցի**, *Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ Կոյսն Մարիամ*, Մատենագիրք հայոց, հ. Գ, էջ 389-395:

⁵³ Ավերիլ Կամերոնն, անդրադառնալով Մարիամի պաշտամունքում *երկնային Թագուհի* բնորոշմանը, նշում է ավելի վաղ հունական աղբյուրներ, որով հերքում է Մարիամի իբրև *երկնային Թագուհի* փառաբանական ձևի կաթոլիկ ծագումը, ըստ որի առաջինը կաթոլիկ եկեղեցական բանաստեղծ Վենանտիոս Ֆորտունատոսն է, որ Մարիամին զովերգել է իբրև երկնային թագուհի: Ա. Կամերոնը վիճարկում է նաև *Թագակիր Տիրամոր* պատկերի կաթոլիկ ծագումը՝ նշելով այս պատկերագրությամբ Ալբանիայում հայտնաբերված ավելի վաղ թվագրվող (Զ դարի սկիզբ) մի խճանկար: Տե՛ս **Averil Cameron**, “The Theotokos in Sixth-century Constantinople: A City finds its Symbol”, p. 85:

սկզբում տեղադրությունն է գաղափարային առումով համապատասխան հայ մեկնողական տեքստերին:

Տարոնացու նկարազարդումները, բովանդակային տեսանկյունից համահունչ լինելով հայ եկեղեցու ընդունած մեկնողական մոտեցումներին, իրենց մարիամակենտրոն ուղղվածությամբ կապվում են նաև ընդհանուր մարիամաբանական աստվածաբանությունը:

SIRANUSH BEGLARYAN

THE MARIOLOGICAL BASIS OF T'OROS TARONATS'I'S ICONOGRAPHY

Keywords: T'oros Taronats'i, Wedding at Cana, Theotokos, soteriology, Gladzor University, ode, hymn, Esayi Nch'ets'i, Mariology, exegesis, Grigor Narekats'i, Song of Songs.

This study is a first attempt of analyzing the miniatures of T'oros Taronats'i from Mariological point of view. It examines particularly the *Madonna and Child* title page images of the Gospel and the image of the *Wedding at Cana* in Ms M6289. These miniatures are regarded as a pictorial system that offers certain exegetical reading. The iconography, the placement of the miniatures and their theological references are taken into account, and other manuscripts with similar illustrations by Taronats'i are considered in the article. The miniatures are studied within the context of both general and Armenian Mariological exegetical writings. In this regard, the general theological definition of the image of Mary and its exegetical reading within Armenian exegetical texts are analyzed. For this purpose, the odes and hymns dedicated to Mary by Grigor Narekat'si and John of Damascus are examined.

The iconography of the miniatures is also studied within the context of historical developments and doctrinal trends of the time: the movement of the *fratres unitores* (who were trying to unite the catholic and Armenian churches) and the anti-unitorian political orientation of the Gladzor University are taken into account.

СИРАНУШ БЕГЛАРЯН

**МАРИОЛОГИЧЕСКАЯ ОСНОВА
ИКОНОГРАФИИ ТОРОСА ТАРОНАЦИ**

Ключевые слова: Торос Таронаци, Брак в Кане, Богоматерь, сотериология, Гладзорский университет, гимн, ода, Есаи Нчеци, мариология, экзегетика, Григор Нарекаци, Песнь песней.

В статье впервые исследуются миниатюры главного художника Гладзорской школы Тороса Таронаци с точки зрения мариологии. В частности в этом аспекте рассматриваются образы *Богоматери с младенцем* на титульном листе рукописи Матенадарана М6289 и миниатюры *Брак в Кане* в той же рукописи. Эти миниатюры в рукописи, иллюстрированной Таронаци, рассматриваются как изобразительная система, подлежащая экзегетическому прочтению. Учитывается иконография и размещение миниатюр и их богословский подтекст.

В статье рассматриваются и другие рукописи, иллюстрированные Таронаци.

Миниатюры изучены в общем мариологическом контексте и в аспекте армянских мариологических толкований. В этой связи рассматриваются гимны и оды, посвященные Марии, составленные Григором Нарекаци и Иоанном Дамаскиным.

Миниатюры рассматриваются также в контексте исторических событий и доктринальных течений того времени, в частности, в связи с проблемой объединения католической и армянской церквей (XIV век) и политической позицией Гладзорского университета, противящегося унии.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. 33

Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման
փորձերը 1910-1914 թթ. 55

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.
Ինքնակենսագրականը..... 67

Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը 105

Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը 133

Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը 150

Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ 165

ԱՐՎԵՍ

Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելիարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարոյ մի էջ, որպես մշակութային
ազդեցությունների խորհրդանիշ 186

Միրանուշ Բեգլարյան

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ 196

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում 215

Կարինե Մոսիկյան

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

Զոհրաբ Գևորգյան

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները
Կիլիկյան Հայաստանում 248

Գևորգ Ղազարյան

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում 259

Անդրանիկ Եսայան

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին 285

Տիգրան Գրիգորյան

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) 299

Շողակաթ Դևրիկյան

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում 331

Գրեհա Գասպարյան

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում 342

Արմինե Պետրոսյան

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը 353

Վահե Ավետիսյան

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին 366

Հովհաննես Ա. Իգիթյան

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

Գոռ Գալստյան

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը 425

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը 445

Տաթևիկ Մանուկյան

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը 476

Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց 504

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ 525

CONTENTS
HISTORY**Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the
Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

Styopa Petoyan

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants‘
in Shushi in the 1880s.....33

Ani Voskanyan

The Armenians’ Attempts to Revive the Economy in Adana
Province Between 1910 and 1914.....55

PHILOLOGY**Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as
Text Critic and Scribe, His Autobiography.....67

Ovsanna Khachatryan

The *Kafas* of Grigor Khat‘ets‘i as the First Samples
in the Collections of Sacred Chants91

Hayk Hambardzumyan

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the
Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

Garnik A. Harutyunyan

The Recension of the “Testament of the Passion
[of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants‘i133

Hasmik Badalyan

Dzorovank‘ Monastery of Cilician Armenia
and its Scriptorial Heritage.....150

Deacon David Sahakyan

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses
of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication
by Abraham Terian.....165

ART

Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan

A Newly Discovered Illustrated Page as a
Symbol of Cultural Influences.....186

Siranush Beglaryan

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

NATURAL SCIENCES

Stella Vardanyan

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense
According to Xenophon's *Anabasis*.....215

Karine Mosikyan

Physiognomical Works in the Manuscripts
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

Zohrab Gevorgyan

Paper, Everyday Life and Social Transformations
in Cilician Armenia.....248

Gevorg Kazaryan

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian
Apostolic Church Rite.....259

Andranik Yesayan

The Province of Zakam in the 17th Century and the First
Quarter of the 18th Century.....285

Tigran Grigoryan

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

Shoghakat Devrikyan

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

Greta Gasparyan

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the
Context of Western Christian Art.....342

Armine Petrosyan

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

Vahe Avetisyan

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

Hovhannes A. Igityan

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed
Calendar and the 532-Year Cycle).....379

Gor Galstyan

The *Commentary of the Armenian Calendar*
by Yovhannēs Sarkavag.....425

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

Tatevik Manukyan

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

REPORT**Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

ФИЛОЛОГИЯ

Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

ИСКУССТВО

Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

Сирануш Бегларян

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Стелла Варданян

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта 215

Карине Мосикян

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана 225

ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

Зохраб Геворгян

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

Геворг Казарян

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви 259

Андраник Есяян

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

Тигран Григорян

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) 299

Шогакат Деврикян

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

Грета Гаспарян

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

Армине Петросян

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике
Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

Ваэ Аветисян

Греко-Православная (Византийская) община
в Киликии XIII - середины XIV вв.....366

Ованнес А. Игитян

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.
Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

Гор Галстян

Толкование армянского
календаря Ованнеса Саркавага.....425

ПУБЛИКАЦИИ**Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),
неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

Татевик Манукян

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

Вано Егиазарян, Ани Ж. Аветисян

Неизданное двуязычное стихотворение
Ованнеса Тлкуранци.....504

СООБЩЕНИЕ**Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 33

BULLETIN OF MATENADARAN

Volume 33

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 33

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/